ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Եղեգնուտ, 1Փ 9Շ ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 Նոյեմբերի 2017թ. ԹԻՎ 37-Ա

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով, Եղեգնուտ համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Հաստատել Եղեգնուտ համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 15 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ (6)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Է. Աբրահամյան	----------	----------	/ ստորագրություն/ ----------
Ս.Է. Կարապետյան	----------	----------	/ ստորագրություն/ ----------
Ս.Ժ. Կարապետյան	----------	----------	/ ստորագրություն/ ----------
Ա. Հակոբյան	----------	----------	/ ստորագրություն/ ----------
Վ. Մարգարյան	----------	----------	/ ստորագրություն/ ----------
Ա. Ռաշոյան	----------	----------	/ ստորագրություն/ ----------

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

Հավելված
Եղեգնուտ համայնքի ավագանու
2017 թ-ի նոյեմբերի 22-ի թիվ 37-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 15 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
3. ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ:
4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Եղեգնուտ, 1Փ 9Շ ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 Նոյեմբերի.2017թ. ԹԻՎ 38-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 10, 11հոդվածներով, 12-րդ հոդվածի առաջին ու երկրորդ մասերով, 14 հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56 հոդվածի 2-րդ մասով համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի վարչական տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ(6)	ԴԵՄ(0)		ՉԵՌՆՊԱՀ(0)
Է. Աբրահամյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Ս.Է. Կարապետյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Ս.Ժ. Կարապետյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Ա. Հակոբյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Վ. Մարգարյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Ա. Ռաշոյան	----------	----------	/ ստորագրություն/	----------

Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Եղեգնուտ
համայնքի ավագանու 2017 թ-ի
Նոյեմբերի 22 -ի թիվ 38-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 /յոթ հազար հինգը հարյուր/ դրամ,

2) սույն մասի «1» – ին կետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200 – ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 / տասնը հինգ հազար/ դրամ,

բ. 500 – 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 25000 / քսանհինգ հազար/ դրամ,

գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 35000 /երեսուն հինգ հազար/ դրամ,

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 / հիսուն հազար/ դրամ,

ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շինությունների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարե կարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն մասի «1» - ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափը, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 12 – րդ հոդվածի առաջ ին մասով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միան կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 12 – րդ հոդվածի առաջին մասով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեխմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է 100000 / հարյուր հազար/ դրամ,

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեխմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ,

6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է 25000/ քսանհինգ հազար / դրամ:

7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թուլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 1500 / հազար հինգը հարյուր / դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 /վեց հազարհինգը հարյուր/ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 /յոթը հազար/ դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 /տասնը մեկ հազար / դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 /տասնը երեք հազար / դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 /քսան երեք հազար/ դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 1500 / հազար հինգը հարյուր / դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 /վեց հազար հինգը հարյուր/ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 /յոթը հազար/ դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11000 /տասնը մեկ հազար / դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13000 /տասնը երեք հազար / դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 23000 /քսան երեք հազար/ դրամ,

8. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

9. Համայնքի վարչական տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին),

խաղատներին ժամը 24^{00} – ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգը հարյուր/ դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքներ օբյեկտների համար՝ 25000/ քսան հինգ հազար/ դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ,

4) խաղատների կազմակերպման համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000/երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

10. Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) Հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2500 / երկու հազար հինգը հարյուր/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 3000 /երեք հազար/ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 /վեց հազար / դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8000 /ութը հազար/ դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնը հինգը հազար/ դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝25001 /քսան հինգը հազար մեկ/ դրամ,

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 500 / հինգը հարյուր/ դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1001 / հազար մեկ/ դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 /երկու հազար հինգը հարյուր/ դրամ,

դ.100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2100 /երկու հազար հարյուր / դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4100 /չորսը հազար հարյուր / դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝8000 /ութը հազար/ դրամ,

11. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև քսան ծավալային տոկոսի արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 / հազար/ դրամ,

2) թունդ ալկահոլային (սպիրտի պարունակությունը քսան և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000/երկու հազար / դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր / դրամ,

4) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով,

6) Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբախշել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

12. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի խորհրդանիշը (զինանշանը, անվանումը և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացում օգտագործելու թույլտվության համար, օրացույցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 100000 /մեկ հարյուր հազար/ դրամ:

13. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում է 10000 / տասը հազար/ դրամ:

14.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:

15. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար տեղական տուրքը օրացույցային տարվա համար սահմանվում է

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1250000 /մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար/ դրամ:

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝2500000 / երկու միլիոն հինգը հարյուր հազար/ դրամ:

16. Համայնքի վարչական տարածքում սահմանել տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ,

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարական թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ,

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 /հինգ հազար/ դրամ,

4)Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 2000 /երկու հազար/ դրամ:

5) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը սահմանել 2000 /երկու հազար/ դրամ, յուրաքանչյուր մասնակցից:

6) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար սահմանվում է 100 /մեկ հարյուր/ դրամ փոխհատուցման վճար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Եղեգնուտ, 1Փ 9Շ ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 Նոյեմբերի 2017թ. ԹԻՎ 39-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի առաջին մասի 31-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2017 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 01/11/4807-17 գրությունը, հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 13.11.2017 թվականի թիվ 130 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում քաղաքացու սեփականություն հանդիսացող բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասից /ծածկագիր՝04-039-022-022/ 0,01հա հողամասի նպատակային նշանակությունը փոխել՝ Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր և ըստ գործառնական նշանակության դասակարգել՝ կապի օբյեկտների հողերի կատեգորիա:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին իրագործելու սույն որոշումից բխող իրավական գործառույթները և Եղեգնուտ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել համապատասխան փոփոխությունը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ (6)	ԴԵՄ (0)		ՉԵՌՆՊԱՀ (0)
Է. Աբրահամյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Ս.Է. Կարապետյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Ս.Ժ. Կարապետյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Ա. Հակոբյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Վ. Մարգարյան	----------	----------	/ ստորագրություն/	----------
Ա. Ռաշոյան	----------	----------	/ ստորագրություն/	----------

Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Եղեգնուտ, 1Փ 9Շ ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 Նոյեմբերի 2017թ. ԹԻՎ 40-Ա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի առաջին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի ապրիլի 21-ի թիվ 10 որոշումը, 2017 թ-ի հուլիսի 4-ի թիվ 22-Ա որոշումը, Եղեգնուտ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներ՝ Միհեր Սուրենի Կոստանյանի, Անդրանիկ Սուրենի Կոստանյանի դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, Եղեգնուտ համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Եղեգնուտ համայնքում երեխա ծննդաբերած՝ Քնարիկ Կառլենի Մելքոնյանին տրամադրել 20 000 (քսան հազար) դրամի դրամական օգնություն:
2. Եղեգնուտ համայնքի սոցիալապես անապահով Վռամ Արամայիսի Վարդանյանի ընտանիքին տրամադրել 50000 (հիսուն հազար) դրամի դրամական օգնություն կնոջ հուղարկավորության համար:
3. ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքը սպասարկող անասնաբույժ՝ Սպարտակ Ավագի Հայրապետյանին տրամադրել 20000 (Քսան հազար) դրամի դրամական օգնություն:

4. Եղեգնուտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին տրամադրել 100000 (հարյուր հազար) դրամի սոցիալական օգնություն՝համաձայն հավելվածի :
5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	ԿՈՂՄ (6)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (0)
Է. Աբրահամյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Ս.Է. Կարապետյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Ս.Ժ. Կարապետյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Ա. Հակոբյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Վ. Մարգարյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Ա. Ռաշոյան	----------	---------- / ստորագրություն/	----------

Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան

Հավելված 2
Եղեգնուտ համայնքի ավագանու
2017 թ-ի նոյեմբերի 22-ի թիվ 40-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

1. Կոստանյան Միեր Սուրենի	50000 (հիսուն հազար) դրամ,
2. Կոստանյան Անդրանիկ Սուրենի	50000 (հիսուն հազար) դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ